ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ՀԱՃՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Հաճն համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, ք.Նոր Հաճն, 0224 4 25 50, nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

01 Մարտի 2021 թվականի N 50

ՄԱՐՏԻ 8-Ի՝ ԿԱՆԱՆՑ ՏՈՆԻ ՀԱՄԱՔԱՂԱՔԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, 46-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով և հիմք ընդունելով մասնագիտական առաջարկությունը՝ ***որոշում եմ.***

1. Մարտի 8-ի՝ Կանանց տոնի համաքաղաքային միջոցառման կազմակերպման և անցկացման համար, համայնքի 2021 թվականի բյուջեի գործառնական դասակարգման 08.2.4 <Այլ մշակութային կազմակերպություններ> հատվածի 4237 <Ներկայացուցչական ծախսեր> հոդվածից հատկացնել 622600 դրամ, 4269 <Հատուկ նպատակային այլ նյութեր> հոդվածից 121800 դրամ և 10.7.1 <Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող)> ծախսերի տնտեսագիտական 4729 <Այլ նպաստներ բյուջեից> հոդվածից 1025000 դրամ դրամական օգնություն:
2.Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ, գլխավոր հաշվապահ Ս.Բաղալյանին ապահովել միջոցառման ֆինանսավորումը՝ ըստ հաստատված նախահաշվի:
3.Սույն որոշման կատարման հսկողությունը դնել համայնքապետարանի աշխատակազմի կրթության և մշակույթի հարցերով առաջատար մասնագետ Հ.Սիմոնյանի վրա:
4.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Գ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

01.03.2021թ
Ք.Նոր Հաճն

Հավելված1
Նոր Հաճն համայնքի ղեկավարի
2021 թվականի մարտի 1-ի N 50 որոշման

ՑԱՆԿ

2021 թվականի մարտի 8-ի կապակցությամբ Արցախի դեմ սանձազերծված պատերազմի ընթացքում զոհված ներքոհիշյալ նորհաճնցի հերոսների ընտանիքներին , մայրերին կամ կնոջը դրամական օգնության

Հ/հ	Անուն, ազգանուն	Տրամադրվող գումարի չափը՝ դրամ
1	Հռիփսիմե Հովհաննիսյան	50000
2	Սաթիկ Քյասինյան	50000
3	Գայանե Մանուշակյան	50000
4	Սվետլանա Մարտիրոսյան	50000
5	Անահիտ Պողոսյան	50000
6	Մարինե Խաչատրյան	50000
7	Լաուրա Հովհաննիսյան	50000

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԳԱԳԻԿ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Հավելված 2
Նոր Հաճն համայնքի ղեկավարի
2021 թվականի մարտի 1-ի N 50 որոշման

ՑԱՆԿ

2021 թվականի մարտի 8-ի կապակցությամբ նորհաճնցի ամենատարեց բնակչուհուն (103-ամյա) դրամական օգնության

Հ/հ	Անուն, ազգանուն	Տրամադրվող գումարի չափը՝դրամ
1	Սիրանուշ Չոբանյան	25000

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԳԱԳԻԿ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Հավելված3
Նոր Հաճն համայնքի ղեկավարի
2021 թվականի մարտի 1-ի N 50 որոշման

ՑԱՆԿ

2021 թվականի մարտի 8-ի կապակցությամբ նորհաճնցի միակ կույր բնակչուհուն դրամական օգնության

Հ/հ	Անուն, ազգանուն	Տրամադրվող գումարի չափը՝ դրամ
1	Արև Գևորգյան	25000

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԳԱԳԻԿ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Հավելված 4
Նոր Հաճն համայնքի ղեկավարի
2021 թվականի մարտի 1-ի N 50 որոշման

ՑԱՆԿ

2021 թվականի մարտի 8-ի կապակցությամբ նորհաճնցի բազմազավակ ընտանիքների ներքոհիշյալ մայրերին դրամական օգնության

Հ/հ	Անուն, ազգանուն	Տրամադրվող գումարի չափը՝ դրամ
1	Անուշ Ժամկոչյան	25000
2	Ազգանուշ Մադոյան	25000
3	Գայանե Դալլաքյան	25000
4	Նարինե Սարգսյան	25000
5	Քնքուշ Առաքելյան	25000
6	Լեռնուհի Ասիրյան	25000
7	Վարդուհի Արզումանյան	25000
8	Գեղեցիկ Մկրտումյան	25000
9	Մարգարիտա Տոնոյան	25000
10	Լուսինե Գրիգորյան	25000
11	Գեղեցիկ Հարությունյան	25000
12	Թեհմինե Ապրեսյան	25000
13	Մարիա Հակոբյան	25000
14	Արմինե Թորոսյան	25000
15	Հերմինե Բաբաջանյան	25000
16	Սիրանուշ Մկրտչյան	25000

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԳԱԳԻԿ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Հավելված 5
Նոր Հաճն համայնքի ղեկավարի
2021 թվականի մարտի 1-ի N 50 որոշման

ՑԱՆԿ

2021 թվականի մարտի 8-ի կապակցությամբ Արցախյան ազատամարտում զոհված ներքոհիշյալ նորհաճնցի ազատամարտիկների ընտանիքների կանանց կամ մայրերին դրամական օգնության

Հ/հ	Անուն, ազգանուն	Տրամադրվող գումարի չափը՝ դրամ
1	Գայանե Պետրոսյան	25000
2	Հասմիկ Դալլաքյան	25000
3	Մարգարիտ Աբրահամյան	25000
4	Սոֆյա Գևորգյան	25000
5	Լաուրա Եղիազարյան	25000
6	Լյուբա Գասպարյան	25000
7	Արմինե Մանվելյան	25000

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԳԱԳԻԿ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Հավելված 6
Նոր Հաճն համայնքի ղեկավարի
2021 թվականի մարտի 1-ի N 50 որոշման

ՑԱՆԿ

2021 թվականի մարտի 8-ի կապակցությամբ Արցախի դեմ սանձազերծված պատերազմի ընթացքում զոհված Մարսել Վարդանյանի մոր Արցախի Հանրապետության Հադրութի շրջանի Բանաձոր գյուղի բնակիչ ,այժմ Նոր Հաճն համայնքում ժամանակավոր բնակություն հաստատած Կարինե Վարդանյանին դրամական օգնության

Հ/հ	Անուն, ազգանուն	Տրամադրվող գումարի չափը՝դրամ
1	Կարինե Վարդանյան	50000

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԳԱԳԻԿ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 ք. ՆՈՐ ՀԱՃՆ,ՏՈՌՈՉՅԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50 Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

01 Մարտի 2021 թվականի N 51

ԱՐՑԱԽԻ ԴԵՄ ՍԱՆՁԱԶԵՐԾՎԱԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՎԻՐԱՎՈՐՈՒՄ ՍՏԱՑԱԾ ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՓԱՍՏԱՑԻ ԲՆԱԿՎՈՂ ԿԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԷԴՈՒԱՐԴ ՌՈԲԵՐՏԻ ԲԵԳԼԱՐՅԱՆԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, 38-րդ հոդվածի 1-մասի 7-րդ կետի և 40-րդ հոդվածի 2-րդ մասի 1- ին կետի, Նոր Հաճն համայնքի ավագանու 2017 թվականի փետրվարի 20-ի <<Նոր Հաճն համայնքի կամավոր խնդիրները, կամավոր խնդիրներին ուղղված սեփական լիազորությունները և դրանց լուծման նպատակով իրականացման կարգը հաստատելու մասին>> N6-Ա որոշման պահանջներով, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Նոր Հաճն համայնքում փաստացի բնակվող կամավորական Էդուարդ Ռոբերտի Բեգլարյանը 2020 թվականի սեպտեմբերի 27- ին սկսված Արցախի դեմ սանձազերծված պատերազմի ընթացքում ստացել է վիրավորում և հիմք ընդունելով համայնքապետարանի սոցիալական հարցերի հանձնաժողովի եզրակացությունը՝ **որոշում եմ**.

1.Արցախի դեմ սանձազերծված պատերազմի ընթացքում վիրավորում ստացած Նոր Հաճն համայնքում փաստացի բնակվող կամավորական Էդուարդ Ռոբերտի Բեգլարյանին համայնքի 2021 թվականի բյուջեի գործառնական դասակարգման 10.7.1. <<Սոցիալական հատուկ արտոնություններ>> հատվածի ծախսերի տնտեսագիտական դասակարգման 4729 <<Այլ նպաստներ բյուջեից>> հոդվածից հատկացնել 100000 (հարյուր հազար) դրամ դրամական օգնություն

2. Հանձնարարել համայնքապետարանի գլխավոր հաշվապահ Ս. Բաղալյանին՝ ապահովելու ֆինանսավորումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Գ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

01 մարտ 2021 թվական
Նոր Հաճն համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 ՆՈՐ ՀԱՃՆ,ՏՈՌՈԶՅԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50 Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

02-ը մարտի 2021 թ. N 52
Նոր Հաճն համայնք

ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱԿՏ (ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ) ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի, Նորմատիվ իրավական ակտերի մասին օրենքի 38-րդ հոդվածի պահանջով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման պահանջներով և հաշվի առնելով Լյովիկ Դավթյանի դիմումն ու համապատասխան փաստաթղթերի առկայությունը՝ ***որոշում եմ.***

1. Ձևակերպել կառուցապատող Լյովիկ Դավթյանի կողմից իրականացված Նոր Հաճն համայնքի Ս.Ջուլֆյան թաղամասի 6-րդ փողոցի թիվ 10 հասցեում գտնվող բնակելի տան և օժանդակ շինության ավարտական ակտը (շահագործման թույլտվություն կցվում է):
2. Ուժը կորցրած ճանաչել Նոր Հաճն համայնքի ղեկավարի կողմից տրված՝ 2020 թվականի դեկտեմբերի 02-ի թիվ 7 ավարտական ակտը (շահագործման թույլտվությունը) և 2020 թվականի դեկտեմբերի 02-ի Նոր Հաճն համայնքի ղեկավարի կողմից տրված թիվ 243 որոշումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից:

Համայնքի ղեկավար՝ **Գ. Մաթևոսյան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ՀԱՃՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Հաճն համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, ք.Նոր Հաճն, 0224 4 25 50, nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

02 Մարտի 2021 թվականի N 53

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>>օրենքի 35-րդհոդվածի 1-ինմասի 24-րդկետի և 48-րդ հոդվածի, Նոր Հաճն համայնքի ավագանու 2017 թվականի փետրվարի 20-ի <<Նոր Հաճն համայնքի կամավոր խնդիրները, կամավոր խնդիրներին ուղղված սեփական լիազորությունները և դրանց լուծման նպատակով իրականացման կարգը հաստատելու մասին>> N6-Ա որոշման պահանջներով, հաշվի առնելով Հարավ Արևելյան թաղամասի 2 փողոցի 26 տան բնակիչուհի Գրետա Գրիգորի Ասլանյանի դիմումը և հիմք ընդունելով համայնքապետարանի սոցիալական հարցերի հանձնաժողովի եզրակացությունը՝ **որոշում եմ.**

1. Համայնքի 2021 թվականի բյուջեի գործառնական դասակարգման 10.7.1. <<Սոցիալական հատուկ արտոնություններ>> հատվածի ծախսերի տնտեսագիտական դասակարգման 4726 <<Հուղարկավորության նպաստներ բյուջեից>>հոդվածից 70000 (յոթանասուն հազար)ՀՀ դրամի չափով դրամական օգնություն տրամադրել համայնքի բնակիչուհի Գրետա Գրիգորի Ասլանյանին ամուսնու՝ Սուրեն Գարեգինի Ասլանյանի թաղման ծախսերը հոգալու համար:

2. Հանձնարարել համայնքապետարանի գլխավոր հաշվապահ՝ Ս. Բաղալյանին ապահովելու ֆինանսավորումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Համայնքի ղեկավար՝ **ԳԱԳԻԿ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

2021 թ. մարտ 03
ք.Նոր Հաճն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 ք. ՆՈՐ ՀԱՃՆ,ՏՈՌՈՉՅԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50 Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

02-ը մարտի 2021թ. N 54
Նոր Հաճն

ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՏԿԱՑՈՒՄԻՑ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 48-րդ կետերի պահանջներով ,Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ և հաշվի առնելով այն հանգամանքը որ բնակելի տունը և քարե պարիսպը կառուցվել են 2000 թվականին, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով, դրանց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հիմք ընդունելով՝ Աշոտ Մովսեսի Բեգյանի (ծնված՝ 19.11.1962թ.) դիմումն ու համապատասխան փաստաթղթերի առկայությունը ***որոշում եմ՝***

1. Ճանաչել Աշոտ Մովսեսի Բեգյանի և Լյուդմիլա Ռազմիկի Զարգարյանի ընդհանուր համատեղ սեփականության իրավունքը Նոր Հաճն համայնքում գտնվող՝ 07-006-0057-0017 կադաստրային ծածկագրով, 0.060 հա տնամերձ հողամասը (հիմք՝ քաղվածք հողային բարեփոխուներ և սեփականաշնորհման հանձնաժողովի 12.09.1991 թվականի թիվ 9 որոշմամբ) և դրանից ավել օգտագործվող մինչև 20 տոկոս 0.0118 հա հողամասի նկատմամբ /ընդամենը՝ 0.0718 հա/ քանի որ դա չի հանդիսանում Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60 հոդվածով սահմանված հողամաս, ինչպես նաև համայնքի հողերի օգտագործման սխեմայով կամ գլխավոր հատակագծով տվյալ հողակտորը նախատեսված չէ այլ նպատակային, կամ գործառնական նշանակությամբ օգտագործելու համար, հողօգտագործումը չի խոչընդոտում այլ հողամասերի նպատակային կամ գործառնական նշանակությամբ օգտագործմանը, հողամասը ընդգրկված չի ինժեներատրանսպորտային օբյեկտների (ավտոճանապարհներ, երկաթգծեր, էլեկտրահաղորդակցության, ջրամատակարարման, ջրահեռացման, կապի ցանցեր, գազատարներ, ջրանցքներ) օտարման գոտիներում և սպասարկման համար նախատեսված տարածքներում, հնագիտական, պատմամշակութային հուշարձանների պահպանության գոտիներում, բնապահպանական արժեք ներկայացնող հողամասերում, որի օրինականցման դեպքում նախատեսված վճարներ չեն գանձվում:
2. Հաստատել սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի հատակագծերը (կցվում են):
3. Սույն որոշման 1-ին կետում նշված հողամասին տրամադրել հասցե՝ **Նոր Հաճն համայնք, Հարավ արևելյան թաղամաս, 11-րդ փողոց, թիվ 1 հասցե:**

4. Նոր Հաճն համայնքի, Հարավ արևելյան թաղամասի, 11-րդ փողոցի, թիվ 1 հասցեում գտնվող Աշոտ Մովսեսի Բեգյանի և Լյուդմիլա Ռազմիկի Զարգարյանի ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող բնակավայրի նշանակության բնակելի կառուցապատման 07-006-0057-0017 կադաստրային ծածկագրով, 0.0718 հա օրինական հողամասի վրա կառուցված 227.02 քմ ընդհանուր արտաքին մակերեսով բնակելի տունը և 4.35 քմ մակերեսով քարե պարիսպը ճանաչել վերը նշված անձանց սեփականություն:
5. Ընդունել ի գիտություն, որ սույն որոշման 4-րդ կետում նշված շինությունները չեն գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված են քաղաքաշինական նորմերին ու կանոներին համապատասխան, չեն հակասում թաղամասի կառուցապատման պլաններին և դրանց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները, օրենքով պահպանված շահերը և վտանգ չեն սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, որի օրինականացման դեպքում նախատեսված վճարներ չեն գանձվում:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից:

Համայնքի ղեկավար **Գ. Մաթևոսյան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ՀԱՃՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Հաճն համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, ք.Նոր Հաճն, 0224 4 25 50, nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 Մարտի 2021 թվականի N 55

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>>օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի և 48-րդ հոդվածի, Նոր Հաճն համայնքի ավագանու 2017 թվականի փետրվարի 20-ի <<Նոր Հաճն համայնքի կամավոր խնդիրները, կամավոր խնդիրներին ուղղված սեփական լիազորությունները և դրանց լուծման նպատակով իրականացման կարգը հաստատելու մասին>> N6-Ա որոշման պահանջներով, հաշվի առնելով Տոռոզյան փողոցի 3 շենք 10 բնակարանի բնակչուհի Սիրանուշ Մամիկոնի Ղալեչյանի դիմումը և հիմք ընդունելով համայնքապետարանի սոցիալական հարցերի հանձնաժողովի եզրակացությունը՝ **որոշում եմ.**

1. Համայնքի 2021 թվականի բյուջեի գործառնական դասակարգման 10.7.1. <<Սոցիալական հատուկ արտոնություններ>> հատվածի ծախսերի տնտեսագիտական դասակարգման 4726 <<Հուղարկավորության նպաստներ բյուջեից>>հոդվածից 70000 (յոթանասուն հազար)ՀՀ դրամի չափով դրամական օգնություն տրամադրել համայնքի բնակչուհի Սիրանուշ Մամիկոնի Ղալեչյանին ամուսնու՝ Գրիգոր Ղարախանիի Ղալեչյանի թաղման ծախսերը հոգալու համար:

2. Հանձնարարել համայնքապետարանի գլխավոր հաշվապահ՝ Ս. Բաղալյանին ապահովելու ֆինանսավորումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Համայնքի ղեկավար՝ **ԳԱԳԻԿ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

2021 թ. մարտ 03
ք.Նոր Հաճն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 ք. ՆՈՐ ՀԱՃՆ,ՏՈՌՈԶՅԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50 Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03-ը մարտի 2021 թ. N 56
Նոր Հաճն

ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 48-րդ կետերի ***որոշում եմ*** .

Սերյոժա Դավթյանին և Արևիկ Մեսրոպյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող /վկայական՝ N 415136/ 07-006-0040-0139 կադաստրային ծածկագրի տակ գտնվող բնակելի կառուցապատման գործառնական նշանակության՝ 0.08 հա մակերեսով հողամասին տրամադրել հետևյալ հասցեն՝

- Նոր Հաճն համայնք, Շասս-Սուղ-Ղոն 2-րդ փողոց, թիվ 20 հասցե:

Համայնքի ղեկավար՝ **Գ. Մաթևոսյան**